

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի երրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2019 թվականի երրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 2915 թղթակցություն, առաքվել՝ 2074 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ Ազգային ժողովից՝ 1, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 105, ՀՀ պետական վերահսկողության ծառայությունից՝ 1, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 260, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 273, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 761, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 800, գաղտնի թղթակցություն՝ 31, քաղաքացիներից՝ 682 դիմում: ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 105 դիմում, որից՝ ՀՀ Ազգային ժողովից՝ 4, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 56, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 2, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 23, հանրապետական գործադիր մարմիններից՝ 20 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2019թ. երրորդ եռամսյակում կատարվել է 81 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: